

Նկարչական խնդիր 1

Փոքրիկ Նարեն սիրում է համակարգչով նկարել: Խմբագրիչը, որը նա օգտագործում է, տրամադրում է N գույն: Նարեն չի սիրում կոնտրաստային գույներ: Հերթական նկարի համար նա ցանկանում է ընտրել K հատ գույն այնպես, որ նրանք, որքան հնարավոր է, իրար մոտ լինեն:

Ինչպես գիտեք, համակարգչում գույնը կազմվում է կարմիրի, կանաչի և կապույտի (RGB) արժեքներով՝ թվերի եռյակով, որոնց արժեքները ընկած են $[0, 255]$ միջակայքում:

Որպես երկու՝ X և Y գույների տարբերություն, սահմանենք $\max(|RX - RY|, |GX - GY|, |BX - BY|)$ արժեքը, որտեղ RX , GX և BX X գույնի, իսկ RY , GY և BY Y գույնի՝ համապատասխանաբար կարմիր, կանաչ և կապույտ բաղադրիչներն են: Հարկավոր է ընտրել K հատ գույն այնպես, որ այդ բազմությանը պատկանող ամենամեծ տարբերությունն ունեցող գույների տարբերությունը որքան հնարավոր է փոքր լինի:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են N և K ($2 \leq K \leq N \leq 10^5$) թվերը: Հաջորդ N տողերից յուրաքանչյուրը նկարագրում է խմբագրիչի հերթական գույնը՝ մեկական բացակով իրարից անջատված երեք թիվ, որոնք պատկանում են $[0, 50]$ միջակայքին:

Ելքային տվյալներ

Հարկավոր է արտածել մեկ թիվ՝ ընտրված K գույներից կազմված լավագույն բազմությունում իրարից «ամենահեռու» գույների տարբերությունը:

Օրինակներ

Մուտք Ելք

3 2

2 3 3

2

4 1 6

4 1 1

5 3

6 6 4

6 1 7

3

3 1 3

5 1 4

6 2 7

